

Պ.Լ.Ա. Կարսիցյան

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ 60—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արեւմտահայ լուսավորիչների մեջ նշանակալից տեղ են զբաղում այն գործիչները, որոնք անցյալ դարի 60—70-ական թվականներին հանդես են եկել Թյուրքիայի ծովափնյա Ձմյուռնիա քաղաքում: Դրանք միմյանց հետ սերտորեն կապված գործիչներ էին— կուս և ուրույն հայրենասիրական-դեմոկրատական շարժման ջանակիւններ: Առաջավոր այդ գրողները կտրված չէին պոլսահայ տղային-աղատաղրական շարժումներից: Հայ հայրենիքի ազատագրման մունեկներ էին նրանք և հայ ժողովրդի կուսուրական-քաղաքական ինքնուրույնության համար պայքարող մարտիկներ:

Հենվելով դավառական հայ գեղարվեստի վրա, այդ նոր հոսանքի գաղափարախոսները միշտ կառված հայրենասիրական պատգամներին, խորապես համոզված էին, որ հայ ժողովրդի աղային կուսուրան կարող է և պիտի բարգավաճի դիմված եվրոպական առաջավոր գիտություններ պնդելով:

Ձմյուռնիահայ նոր հոսանքի անխնայ կոնկ է հայտարարում ամերիկյան բանակին և հնավանդ կրոնական-կղերական գաղափարախոսությանը: Համակրված աննկուն հասնողով և պատանեկական թարմ էնտուզիզմով՝ այդ խմբակի առաջապահ մարտիկները— կուսանդյանը, Ռիզմեճյանը, Չիլինկիրյանը, Նուպարյանը, Մսերյանը հանդես են դալիս որպես գիտություն պրոպագանդիստներ և ժողովրդայնության վրա խաբսխված նոր իմաստասիրությունը շողկապում են կրոնի ու միսակայի, իգեալիզմի ու բնազանցական սիստեմների, շովինիզմի ու հնօրյա ռասիստական հայեցողությունների դեմ ուղղված պատգամների հետ: Կարելի է այնպիսի, որ այս խմբակը ժամանակին որոշ չափով կտպված է եղել նաև մեր մեծ հրապարակախոս Նալբանդյանի հետ և շինց Նալբանդյանի, Սրվաճյանի-Բյուրիսյանի ելույթներից հետո էլ ուժգին թափ է հաղորդել հայկական ոեակցիայի դեմ ուղղված պրոհին: Երբ Նալբանդյանը Հնդկաստանից վերադառնում է, հիշված գործիչները Ձմյուռնիայի երկու խոշոր կրթական ընկերությունների պատգամավորների հետ միասին ուղևորվում են ծովափ, անցնում են Նավը և հանդիսավոր կերպով ողջունում խրենց մեծ ուսուցչին:

Շատ հարուստ երանդներ ունի հայ կուսուրայի պատմության այժմ էլ քիչ հայտնի այդ զրվաղը: Չիլինկիրյանի «Ծաղիկ», Ռիզմեճյանի «Ձայն» և միքանի այլ ժողնալների մեջ կան շատ բովանդակալից հոգվածներ, որոնք լիովին բնութագրում են անցյալի մարտնչող հրապարակախոսներին և պիտի ուսումնասիրվեն ավելի մանրակրկիտ կերպով:

Իմ նպատակն առայժմ շատ համեստ է: Ես կուզենայի նկարագրել ակնարկված հոսանքի երեք բնորոշ ներկայացուցիչներին և հիշեցնել, որ հատկանշական այդ երեք դիմքերը այսօր մանավանդ, կարող են և պիտի հիշատակվեն առանձին ուշադրությամբ և հարգանքով:

Աննալիզմը երեք դործիչներն էլ—Կոստանդյանը, Ճիզմեճյանը, Զիլին-կիրյանը, ինչպես ստացի, հանդես են եկել Զմյուռնիայում:

Մովսիսյան այդ մեծ քաղաքը անցյալում հայ կուլտուրայի շատ յուրահատուկ մի օժախ էր: Այդտեղ կար սովոր հայ բնակչությանը, որ կապված էր շրջակա հայ գյուղերի շինականների հետ: Զմյուռնիան առևտրական հանդույն էր, որի բնակիչները հայտնի էին անդամ կովկասահայերին: Այդ մասին տվյալներ կան առաջին ուսումնական պարբերաթիվի (Վուլկաս, 1846 թ.) մեջ, հայ վաճառականությունը Զմյուռնիայում ակտիվ ու ձևոսերից ու էր, կապված եվրոպական խոշոր արդյունաբերական քաղաքների, հատկապես Մանչեսթրի հետ:

Ամիրայությունն այդ քաղաքում մեծ հմայր չունի: Արևմտյան դադարներն ամիս ուժեղ արձագանք էին դնում այդտեղ աշխարհական և կրոնական իշխանություններից հեռու ժողովրդական հատվածների մեջ: Պատահական չէ, որ ամերիկյան միսիոներներն էլ իրենց կրթական-հրատարակչական գործունեության համար հենակետ են դարձնում Զմյուռնիան: Անցյալ դարի 30-ական թվականներից սկսվել վաճառական Գրիֆֆիտի նախաձեռնությամբ հիմնված տպարանում մի շարք հայեր են գրքերի հետ միասին աշխարհաբար լեզվով լույս է տեսել նաև Վեսեմարյան պիտանի գիտելիացք ժողովրդի (1839—45): Խոշոր գեր են կատարել Տեսեյան եղբայրները, որոնք ուսու հայտնի Սոլդատենկովսկի նման կուլտուրայի գերներ էին: Իրանի հրատարակել են բազմաթիվ գրքեր, հայ գրողների ինքնուրույն երկեր և ապա եվրոպական կլասիկների բնույթի թարգմանություններ: Տեսեյանների տպարանում լույս են տեսել Դյուբայի վեպերի, Շեքսպիրի, Մոլիերի, Ժյուլ-Վեռնի, Վոլտերի, Սվիֆտի և մի շարք այլ հեղինակների երկերի թարգմանությունները: Այդ բոլոր հրատարակությունները թրագմաթիվ հատորներով ոչ ոքում են: Պոլսո և արասահմանի գրավաճառական հրատարակները:

Զմյուռնիայում կային բազմաթիվ կուլտուրական հաստատություններ, որոնցից մի երկուսը հիմնվել են անդամ 40-ական թվականներին: Երթուկան մեծ բնակչություններ էին՝ «Սյունյաց բնակչություն» (1841), «Արաղածունյաց բնակչություն» (1843—46), «Հաշտենից միություն» (1862—63), «Աղքատասիրաց բնակչություն» (1861), «Հայ բնակչություն» (1868), «Սեմեյի բնակչություն» (1873), «Տիկնանց հողատար բնակչություն» (1879) և այլն: Շատ ակտիվ է եղել կանանց դերը: Ազգային Հեթիմիայան վարժարանի սանուհիների ձևերը ինքնավար գիշեր-օթիկ դպրոցում պատասխարկում և դաստիարակվում էին դանդաղ քաղաքներից (Կարին, Քարբեղ, Ան, Արարկիր և այլն) հավաքված ուրուհիները: Կային նաև ակումբներ: Այդպիսի մի ակումբ էր այն «Լեթերատուր», հասարակական գործիչները: «Լեթերատուր» սրահում ելույթներ են ունեցել Մամուրյանը, Քրիսյանը, կին գործիչ Վեսեյան -70-ական թվականներին: Բազմաթիվ ազդեցություններ ու կրոնների ներկայացուցիչներ մի թաղերային էր այդ հին Զմյուռնիան: Քաղաք մանող կարավանները և ծովափին խմբված նավերը տեղական մթնոլորտին հաղորդում են ուրույն

կուրբիս: Այդտեղ ինքը միջավայրն արդեն սնունդ էր տալիս ներհակ զաղափարների զարգացմանը: Զմյուռնիայում կար նույնիսկ կոսմոպոլիտ մտածող, արուստ վաճառականի որդի Պետրոս Թրնկը գնում է մի տեղափայր և քաղաքամերձ մի գյուղի մոտ կառուցում է վիլլա, ապա հորինում ինչ-որ միջազգային մի նոր լեզու, հրատարակում է նոր քերականություն և քարոզում է կոսմոպոլիտական զաղափարներ: Վիլլան, որ կոչվում էր «Տուն իմաստության», ուներ ճոխ զրադարան: Պետրոս Թրնկըր ապրում էր հին ճղնավորների նման և հայտնի էր բոլոր զմյուռնիահայերին: Որքան էլ տարօրինակ և անախրոնիկ էր այդ դործիչը, նա էլ էր բնորոշում բազմազգ քաղաքի բնակչության որոշ շերտերի մտայնությունը: Այդպիսի ոչ մի ուրիշ Թրնկը չէր կարող ծնվել և սնվել հին Խյուրքիայի որևէ այլ քաղաքում¹:

Զմյուռնիան և՛ արևելյան, և՛ Եվրոպական քաղաք էր: Հին արևելյան քաղաքի սրղանիդմի մեջ ներարկվել էին արդեն կուլտուրական նոր հոգեր: Մաղաքում կար բուրժուազիա, կային արհեստավորներ, ստեղծվում էր նաև նոր ինտելիգենցիա:

Ահա այդ միջավայրում էլ մնում է Դալուստ կոստանդյանը, որի հայրը հայտնի վաճառական էր և ազգասեր գրքորչ, սայրը՝ Հոխիսիմյան միջնակարգ դպրոցի հիմնադիր, իսկ եղբայրը—Ֆրանսիական վոլտերական—18-րդ դարի մարկիզների արտաքինով համարվաժող բմիչի: Մեծ և հարուստ բնտանիք էր: Դալուստ կոստանդյանն էլ ստանում է լրարժր կրթություն: Նրա համար Ֆրանսերենը հայերենի նման հարազատ լեզու էր: Կարգում էր շատ: Ուներ շրջի զրադարան, ուր կային անդլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, հունարեն բաղմաթիվ և հազվագյուտ հրատարակություններ: Սր ու գիշեր կարգում էր: Պատանեկության տարիներին նա հրատարակում է մի շարք բնագիտական գրքույկներ—մարդարանություն, զանգարանություն, էթնոլոգիականություն, մինչև անգամ մեմբրականություն մասին: Հաճախ ուղևորվում է Եվրոպա և միշտ էլ վերադառնում է ծանրաբեռնված գրքերի կուլտուրով: Փարիզում ծանոթանում է ֆրանսիական մեմբրականների հետ և ապա երկու բնկերությունների (մեմբրական և արևելագիտական) անգամ է զառնում: Նույնպես ուղևորվում է, որ Դոստոևսկին ժամանակին աշխատակցել է ֆրանսերեն թերթերին և «Որին» անունով ֆրանսերեն գրքույկներ է հրատարակել: Գիտական լինելով հանդերձ՝ Դոստոևսկին կտրված չէր գեղարվեստից—նվագում էր և անգամ երաժշտական ինստրումենտներ կրկն էր գրում: «Երամը,—պատմում են ժամանակակիցները—կատարյալ առատություն կրածաներ թշվառներին»: Սկսեց օր,—կարգում ենք Նույնարյանի հուշերի մեջ,—հատուկ մամեր աշխատում էր իր ճոխ զրադարանում:

Իր զրական գործունեությունն առաջին շրջանում կոստանդյանը նեոֆիտ

¹ Զմյուռնիացի էր նաև հայտնի ազաաաիոն գործիչ Ֆիլիմ Պողոսը: Այսպես թյան տարիներին ապրել է Զմյուռնիա: ապա 1808-ին մեկնելով Կ.-Պոլիս՝ դաաաիոսել է Պեզդյան Ամիրայի աան մեջ: Եղել է ուսուցիչ իր հայրենի քաղաքում, Որթա գյուղում, Պրուսայում և Երուսաղեմում: Պոլսում դասարան է հիմնել հին հունական իմաստասերների նման «Եռլույի արհեստավոր քոլոց համար»: Հեաաղայում մեծ համբավ աաանայով այդ բնագետ փիլիսոփան աքաբրվել է Կեսարիա որպես հերետիկոս:

Ալլադյանյան—«Պատմություն հայ Կեսարիայի, Գահերի, 1937 թ., հատոր 1-ին, էջ 1016:

էր և պաշտպանում էր իդեալիստական հայացքները, հիմնական թվականներին հրատարակված բրոշյուրների մեջ գիտական փաստերը մերթ րնդ մերթ չաղկապված են հեքիաթային, ֆանտաստիկ ակնարկների հետ։ Երբ Նուպարյանն ուղևորվում է Փարիզ, Կոստանդյանը խնդրում է մտնել իր հին ծանոթ մեսմերական Ալան Քարտեթի մոտ... «Փարիզում,—պատմում է Նուպարյանը,—կիսատովանենք թե ոգեհարցության այդ առաքյալը իր հույժ պատկառելի կերպարանքին տակ փոքր ինչ ցնդած բարի ծերուկի մը տալովորություն ըրավ մեր վրա»։

Ահա նման ծանոթներից, մեամերիզմից և սպիրիտուալիզմից, հին բնադանցական ուսմունքներից իր դործունեության երկրորդ շրջանում հրաժարվում է Կոստանդյանը և մշակում է նոր մատերիալիստական իմաստասիրություն։ Դեպքաբարական ընկման դարկ նն տալիս ազդային-ազատագրական շարժումները, Կոստանդյանը հիվանդանում է, հեռանում է առաքարեղից և վերստին հունդես է գալիս Զիլինկիրյանի «Ծագիկ» ժուռնալի մեջ, նոր կոստանդուպ, 1861-ին, 1861-ից մինչև 1878-ի շրջանը լինում է պայքարի շրջան։ 1878-ին լույս է տեսնում Կոստանդյանի «Մեթոսին» վրա գիրքը, որը խախտում է անդամ Վոլտերի և Մոնտեսկիոյի հայերկրպագուների տրագիցիոն գիծը։ Կոստանդյանի գրքի շաղկի վրա նշված էր՝ «Արևելյան դիտական մատենաշար», առաջին հատոր։ Ըստ երևութին ամբողջ մատենաշարը պիտի հակադրվեր հիմնական թվականներին հրատարակված բնագիտական մատենադարանին։ Դրքի էպիգրաֆն է՝ «Հառաջագիծությունը—գիտությամբ»։

Կոստանդյանի այդ աշխատությունը փաստալից ուսումնասիրություն է, լեցուն բաղմաթիվ ցիտատներով, նա հանդես է գալիս որպես էրուդիտ և դիտավորությամբ հիշատակում է գիտության բազմաթիվ ներկայացուցիչների երկերը։ Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն գիտական հետադուտությունների վերնագրերը և ապա բաղմաթիվ ցիտատները կարևոր «փաստարկումներ» պիտի լինեին կրոնական-իդեալիստական ուղիներին փարած դործիչների դեմ։ Կոստանդյանի «պլանը» պարզ էր։ Այն, ինչ որ զրում ևս, նշում էր նա,—ասում են կվրոպական գիտնականները, նա արձանագրում ևս փաստեր,—միմիայն փաստեր։ Իմ դեմ ելնողներն էլ պարտավոր են պատասխանել միևնույն ձևով։ Անհրաժեշտ է փաստերին հակադրել փաստեր։ Իմ գրքի մեջ հիշատակված գիտնականների հայացքները ջախջախելու համար տնհրաժեշտ է ցուցադրել գիտության ուրիշ հսկաների կթի միայն կան այդպիսիները—արգումենտները։

«Մեր դարաշրջանի հատկանիշն իր գիտական և կրիտիկական ոգին է»,—ասում է Կոստանդյանը։ Միայն ճիշտ մեթոդը—գիտական մեթոդը—կարող է մարդկությանը տանել դեպի նորանոր հաղթանակներ—ահա այդ ուղին էլ նշում են Լյայբելը, Դարվինը, Հեկկելը, Բեկլը, Շամպոլիոնը, Օդյուստ Կոնտը—մարդկության հանճարեղ ներկայացուցիչները։ Երկու հարյուրից ավելի գիտական աշխատություններ են հիշատակվում Կոստանդյանի գրքի մեջ։ Կան քաղվածքներ՝ բնագիտական, պատմագիտական, մաթեմատիկական, փիլիսոփայական, տնտեսագիտական ուսումնասիրություններից։ Խոշոր տեղ են բռնում անթրոպոլոգիայի, ազգագրության, նախնական կուլտուրայի մասին զրված գրքերից բերված ցիտատները։ Հիշվում են նույնիսկ Մարքսի «Կապիտալը» և ապա

դանազան պիտական կոնգրեսներին նյութերը, զեկույցներն ու աստնագրությունները: Ամբողջ գիրքը ամենագոր պիտության ներքող է:

Այդ պիտությունը պիտի օժանդակի «սնտեսական արդարասիրութան», նշում է իրեն հատուկ զիվանադիտական եզրպոսյան լեզվով Կոստանդյանը: Այլ կերպ նա չէր կարող խոսել հին թյուրքիայում, ուր սուլթանական ցենզորների կողքին նշմարվում էին ազգային-կղերական ցենզորների ավելի դժման դեմքերը: Չնայած դրան, Կոստանդյանը կարողանում է շատ բան ասել պարզորոշ կերպով... «Շատ հեռու ենք,—գրում էր նա,—ապագայի մեծ օրը անսնկել, բայց նպատակի հեռավորությունը պետք է համարու ուղղության արդելք մը ըլլա: Հետեւե՛ք միշտ այն մեծ Աստղի, զիմելով հոն, ուր կը դիմեն մեծ մտքերը, այն է՝ անազգային և կամ թե ըսենք՝ համազգային ու անկղեր լուսավորության մը Բանաանը»: Այդ տողերի հեղինակին չէին կարող սարսափեցնել ոչ պահանջողականները և ոչ էլ դրանց ձայնակցող երկերեսանի գործիչները: Գիտությունը Կոստանդյանի համար ամենագոր սպեղանի է... «Կրնա հարցվիլ,—գրում էր նա,—թե ով ջնջեց գետտոն, ով ազատեց խեղճ հրեաները քրիստոնեական սիրո հալածանքներն—դարձյալ և միշտ պիտական օրենսգրությունը, պիտական մեթոդը»:

Արվեստի մեծ վարպետներն էլ խոշոր դեր են կատարել Կոզիմո Մեդիչին զբաղումն է հիմնել և հովանավորել է արվեստագետներին: Լուսավորության գործին մեծ զարկ է տվել մամուլը: «Միքել Անջելո, Մաֆայել Սանցիո, Լեոնարդո դա Վինչի, Թիցիանո... մեծ արթիստները միշտ պիտի հիշվին իրենց բնագնական տաղանդի պատճառով... Այս նկարիչները, որոնք նաև գիտության հմուտ էին, սկսան ընթերցումը զննել, բնությունը օրինակել: Արվեստները անուղղակի նպաստածատույց եղած են գիտության աչքը, ականջը և ձեռքը: Կրթելով ու թարգմտելով իր եսեն դուրս հանելով...»: Այդպիսի կտրուկ ու խիզախ մտքեր ոչ ոք հայ իրականության մեջ չալրանդյանից հետո 70-ական թվականներին չէր վստահել արժարժել:

Ֆիտատները, ինչպես ասացի, մեծ տեղ են բռնում Կոստանդյանի գրքի մեջ: Պրոպագանդայի համար այդ անհրաժեշտ էր աշղպես կարելի էր համոզել տատանվող ու թերահավատ ընթերցողներին: Իրանց թիվը քիչ չէր տեղավորվում լուրերին երկրպագող և ֆրանսիական ռևոլուցիայի պատղամեներին խնկարկող հայ պրպետներին շարքերում:

Բնագետների և փիլիսոփաների կողքին Կոստանդյանը նշմարում է նաև մեծ գեղագետներին: Հոռմեական պոետ-երգիծարան Յուվենալի մասին նա հետևյալ սուր ակնարկն է տեսում. «...Երբ հեղուկությունը ճշմարտության կլորթնի, սրածայր զաշույն մե, և այս զենքն է, որ կզործածե մուսուլմանը: Լուկրեցիոն, Կոստանդյանի կարծիքով, կանգնած լինելով սկեպտիկ լիբրերիստի կողքին, ավելի մոտ է 19-րդ դարի մեծ պիտականներին: «Լուկրեցիոն մեթոդ մը սիրեց, որով Տեմոկրիտի փիլիսոփայության կհակընդդեմ իրերը երգելով»:

Կոստանդյանի գրքի ոճը կուռ է, պարզ ու հստակ: Նա միշտ ընդգծում է պիտության տեսական սկզբունքների գործնական նշանակությունը: «Ամեն մեծ գիտական ճշմարտություն,—ասում է նա,—մեկ մեծ պիտանություն պարզեց աշխարհիս. էլեքտրությունը հեռագիր շինեց, Ֆերմության

1 Կոստանդյան — «Մեթոդիս վրա», Իզմիր, 1878, էջ 131:

ուսումնական շեղեկացումը և անթիվ մեքենաներ և լիան, ու քիմիական և բուժական հմտություններ անթիվ գյուղատնտեսներ բերին մեզին: Համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ խոշոր դեր է կատարել ապատախոհ դրամականությունը: «Շեքսպիրի Համլետն» մինչև Մոլիերի «Տարալուֆը» անթիվ բարոյական խնդիրներ հուզվեցան գրականության միջոցով: Աշխարհաբար ծառացավ միջնադարի լատիներենի դեմ: (Ինդուցիոն շարժումները նոր թափ են հաղորդում կուլտուրայի զարգացմանը: Ոսկայն կուլտուրայի զարգացման համար հիմնական խթանը միշտ եղել է գիտությունը: Դիտական գիտելիքներն են նպաստել նորանոր պրոբլեմների հարուցմանը: Գիտությունը աստատում է, որ կրթական ուղղությունների կողքին մեծապես դեր են կատարել արևելյան մոդուլները: Միջնադարյան կրթական քաղաքները համախառնում էին և անկանոն կառուցված, այնինչ արաբների Բաղդադում կային շեն քաղաքներ, ջրմուղներ, կանոնավոր փողոցներ: Կրթական կենտրոնները դեռ շատ առաջ գիտությանը մեծապես դարձ են տվել արևելյան մոդուլները: Շեշաակի հարված հասցնելով հնդկա-սասանականներին, կոստանդյանը խարսխանում է կրոնական և ցեղական փանատիզմը:

Հակասություններից ազատ չէր կոստանդյանի պատմած ուրույն մատերիալիստական փիլիսոփայությունը: Շատ անգամ նա կուրորեն հետևում էր Ռոյուստ Կոնտին և միակողմանի կերպով էր մոտենում հասարակական պրոբլեմների մեկնարկությանը: Բայց այնուամենայնիվ նրա գրքի մեջ կար շատ թարմ մի շեշտ, ուժեղ օպտիմիզմ, պատմական եռանդ և ավելան, որ առույզ տոն էր հաղորդում ռաջական նոր իմաստասիրությանը: ...«Անթիվ տեսակ գյուտեր» գրում է նա յուրահատուկ պաթոսով, դործիքներ, գեղեր ունենք կյանքը բարվոքելու, ցավը կարելի եղածին չափ ջնջելու, ուսման լուսավորելու, համազգային ոսկե դարի մը գիտավորելու համար...»: Ֆրանսիական մեծ լուսավորչների նման կոստանդյանը կալի երևելով իդեալիստական ուսմունքները դեմ, համոզված էր, որ «կարծիքներն» են պայմանավորում պատմական զարգացման բնթուղքը: Ինքնակախություն էր կոստանդյանի հիմնական ելակետը: Նա դրում էր, որ պիտական մեթոդը յուրացնելուց հետո միայն վերջ է տրվել հասարակական ներհանություններին: Ահա ինչու գիտության բարգավաճումը և գիտության պրոպագանդը, նրա համոզմամբ, պիտի դառնար մարդկության ազատագրմանն ու պրոպանդան նպաստող ամենավճռական ազդակը¹:

Որքան էլ հակասական էին կոստանդյանի հայացքները, հայ ուսակցիայի քուրմերի համար ակներև էր, որ այդ հայացքները ուղեղից ընդունված ունեն և քաջախոսում են կրոնական ու ցեղական ֆանատիզմի վրա խարքաված ազդանական հին պաղափարախոսությունը:

Հայկական ուսակցիան նետվում է կոստանդյանի դեմ: Երեկվա լուսավորչի Ոսկանը մի բրոշյուր է հրատարակում: Զմյուռնիայի լատին առաջնորդը աղջուկում է սեփորմաստ Ոսկանին: Երիտասարդությունը խմբվում

¹ Այդ գիտակցության ելակետ, կոստանդյանը խարսխանում էր ֆարիզի կոմունարներին և ռևոլյուցիոն հասանքների զազափառախոսներին:

է Կոստանդյանի կողքին: Տեմիրձիպաշյանը Կ.-Պոլսից սրտասուրճի հետևում էր դադարարական բախումներին: Մամուրյանը շատ մեղմ տոնով քննադատելով, Կոստանդյանին հիշեցնում էր, որ հայ եկեղեցին հայ ազգի միակ ներկայացուցչական օրդանն է: Ինչպես կարելի է կովի եղնել միակ ազգային այդ օրդանի դեմ: «Կան, նկատում է Մամուրյանը,—գրքի մեջ ճշմարտություններ, որ դիտությունց կվերաբերին և անմիտելի են: Բայց միթե եվրոպայում կոխը իդեալիստների և մատերիալիստների միջև մինչև այսօր չի շարունակվում: Ինչ նշանակություն ունի հայ ազգի համար մատերիալիզմի քարոզը: Հայերը պետություն չունին, ջրված են: Կովի հինիով հայ ազգությունը համաձուլող միակ օրդանի դեմ, Կոստանդյանը իրականում ազգափրատ դեր է կատարում: Այդպես կարելի է բնութագրել Մամուրյանի հոգվածաշարքը: Ահա, դրա համար էլ բնորոշ է, որ նույնիսկ այդ Մամուրյանի համար Կոստանդյանը հարգելի անձնավորություն է և հայ կուլտուրայի խոշոր գեմբ: Ոսկանի ելույթը նա խարաղանում է: Ոսկանի բողոշյուրը թույլ պատասխան է: «Մեկ կողմի կերևին,—գրում է Մամուրյանը,—նոր դիտողներու գունդ մը, նոր դիտությունս պատահեն, մյուս կողմն՝ հեղինակներու շարք մը դասական վկայություններով գինված: Նոր գեներ, որ մահաբեր է, նորանոր գեներով պետք է պատասխանել...»:

Կոստանդյանի գրքի առթիվ լույս են տեսնում մի շարք հոդվածներ և պամֆլետներ: Հասանական է՝ Կ.-Պոլսի պարսիաբարբառների հրահանգով Զմյուռնիայի կրոնական ժողովն էլ կարդալուում էր բռնադրավել և այրել նոր գիրքը: Հեղինակին նախազգուշացնում են, որ նա իրավունք չունի հրատարակել արդեն պատրաստի շորդ պրակը: Կոստանդյանը այդ պրակն էլ է այրում իր բազմաթիվ ձեռագրերի հետ միասին: Նա նորից միայնաանում է և որոշում հայերեն վստանդավոր հոդվածներ գրելու փոխարեն կազմել ֆրանսերեն ընդարձակ բառարան:

Նա լուրմ է—ստիպված է լինում լուրի «Իրեն համար ամեն ազգ իրենին հավասար էր»—գրում էր «Բյուզանդիոնը»: Այդ կարճ խոսքերը շատ ճիշտ են բնորոշում արևմտահայ լուսավորիչների ամենափայլուն ներկայացուցչի գեմբը:

2

Կոստանդյանը միայնակ չէր: Զմյուռնիայում նրա գինակիցներն էին՝ «Ծաղիկ» ժուռնալի գեկավարները—Զիլինկիրյանը, Հայկունի Օրդմեճյանը, ապա «Մետեորա» ժուռնալի խմբագիր Մսերյանը և դրադիտ նուպարյանը: Եւ այստեղ կանդ կառնեմ տաճին երկուսի վրա:

Հայկունի Օրդմեճյանը սնվել է տեղիական միջավայրում: Եղել է «Մուսոյք Մասյոց» գեղարվեստական-թատերական ժուռնալի (1857—58) խմբագիր: Անցյալում մասնակցել է Ղրիմի պատերազմին: Միլիտարիայի պաշարման օրերին գինվորական թարգմանի պաշտոն է կատարել տաճկական բանակում: Եղել է գերասան և ուսուցիչ: Վաթսուական թվականներին նա դառնում է արևմտահայ գեմեկրատիայի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկը և պահպանողական հոսանքի դեմ հրատարակում է մի շարք բրոշյուրներ: Նա հանդես է գալիս նաև որպես բնագիտության պրոպագանդիստ և մի քանի բրոշյուր է հրատարակում ժողովրդական առողջապահության մասին: Բրոշյուրները մեծ իրարանցում և ազդու էին

ստեղծում Բրոշյուրների մեջ տեքստին կցված էին անատոմիական նկարներ: Հայկական ճահիճը շարժվում է: Պաշտոնականներին ձայնակցում է լիբերալի համրով վայելող Ս. Փափազյանը, որը խարազանելով Ճիզմե-
ճյանին, հայտարարում է, թե անատոմիական նկարները զգվելի են և կարող են փառապար ազդեցություն թողնել ընթերցողների վրա: Դա գեղա-
պոլիտ էր: Հայկունին կտրուկ կերպով կոփի էր ելել կղերականների դեմ և զրվատելով բնագիտությունը, միաժամանակ խարազանում էր ազգային պատերազմության հնամենի ուղիները: Փափազյանը ազդեցիկ գործիչ էր, հայանի էր հայ լիբերալների շրջանում: Սակայն Հայկունին գենքը վայր չի դնում: Դա մի պոլիմիկական բրոշյուր է հրատարակում Փափազյանի դեմ և այդտեղ էլ աշխատում է պարզաբանել իր հայացքները:

Բուր Նոր սկզբունքները, — գրում է նա, — երբ առաջին անգամ առաջադրվում են, թշնամիներ են ունենում. միայն հասարակ ժողովուրդն է պաշտպանում տաջավոր սկզբունքները: Նոր դադափարների թշնամիները սովորաբար վայնասուն են բարձրացնում և աշխատում են խաբխրել ժողովրդին: «Հայանի թող լինի ամեն մի ազգակիցներու», թե մենք տարի-ներն հեռե... ճշմարիտ ազգասիրություն միավազեցանք: այնպիսի սկզբունքներ մատակարարել, որոնցմով անտարակույս էինք և եմք թե հնարավոր է մեր բարեկարգությունը և երջանկությունը...», — ապա այդ տողերից հետո նա պարզում է իր դավանած հիմնական յոթ սկզբունքները:

Մարդիկ, — ասում է Հայկունին, — ցանկանում են երջանիկ կյանք ապրել հենց այս աշխարհիս մեջ: Երջանիկ լինելու համար նրանք պարտավոր են ուսումնասիրել բնության օրենքները և մարդկային կազմության հիշյալ օրենքներուն հետ ունեցած հարաբերությունները... Ելնելով այդ հիմնականից, նա խորացնում է կրոնի գաղափարախոսներին: «Մարդկային բարոյականությունը երբեք ծագումն առած չէ կրոնքեն: Վերջապես՝ «մարդս աշխարհ էկած չէ լոկ հանդերձյալ կենաց համար տանջվելու... այս կյանքս ալ շատ երանություններ ունի, որ վայելելու է:» Հրապարակագիրը բավական խորամանկ ձևով հայտարարում է, որ հարգանքով է վերաբերվում կրոնին և իր պաշտոնյաներին: Ուշտ է, ինքը համոզված է, որ մարդկային երջանկությունն էլ կախված է բնագիտության բարգաւաճ գարգացումից, բայց միթե դա անկրոնություն է: Չէ՞ որ բնության օրենքները չուսումնասիրող մարդիկ հարված են հասցնում իրենց: Վաղածամ ամուսնությունները, օրինակ, մեծագույն ֆրաս են սովել երիտասարդներին: Ի՞նչպես կարող էր ձեր աստվածը հայտարարել, թե մարդիկ ծնվել են լոկ հանդերձյալ կենաց համար տանջվելու և անվերջ աղոթք պիտի անեն, պաս պահեն, լան, ոգրան և տեր ոգորմյա կանչեն: Չէ՞ որ դա մեծ հիմարություն է, որ բնավ պատիվ չի բերում մարդասեր արարչին:

Վերջին նկատողության հյուսվածքը ցույց է տալիս, որ հեղինակը պատրաստվում է ծագրել իր հակառակորդին: Մարդուն, — ասում է նա, — կարող է երջանկություն տալ մտավոր աշխատանքը, իսկ այժմ մեզ դրանից էլ զրկում է ուսման և գիտության թշնամի Փափազյանը: Հայ կղերականները փառասեր, արծաթասեր և անբարոյական են: Միթե պարոն Փափազյանը հալարա, անողորմ և ամազակ կրոնականներին կարող է համարել աս-

¹ Արմեն Հայկունի — «Երեմակ կամ պարոն Ս. Փափազյան և յուր մամանակը», Կ. Պո-
լիս, 1865, էջ 2:

տուժո՞ւ և քրիստոսի առճարի պաշտոնյաներս՝ ինչու է նա մոռանում, որ այդ անողորմ կղերականները ոչ իրավունք են ճանաչում, ոչ արդարութուն։ Քրիստոս աշխարհի համար խոփեցաւ, մեր կրօնավորները մահն ուր մեզ խաչելու վրա են։

Փափաղյանի կողքին կանգնած էին ոչ միայն կղերականները, այլև տառանվող ընթերցողները, Հայկունին աշխատում էր զրանց էլ «խելքի բերել» և աստիճանաբար աղատադրել կրօնական կուռքերի ազդեցութեանից։ Կարուկ զիճը կարող էր տառանվող ընթերցողների վրա անախորժ ազդեցութուն թողնել։ Անկրօն պրոպագանդիստին դրանք չէին կարգաւ իր թշնամուն մոհացու հարված հասցնելու համար Հայկունին հաճախ հենվում էր րարեպաշտ քրիստոնյաների իղեպական կրօնի սկզբունքների վրա և ապա զինված րարեպաշտ մարդկանց ղեկավարել էլ նետվում էր սեպիցիոն գործիչների դեմ։ Նա ցիտատներ է բերում ավետարանից և այդ ցիտատներին էլ կոթնած՝ քարկոծում է կղերականներին։ «Նա, — կարգում ենք Հայկունու բողոքարկ մեջ, — որ լոկ կրօնասեր է և այս աշխարհի բաները չի կրնար խորհիլ, մարդս չի կրնար աշխարհաշին լինել, քանի որ լոկ կրօնասեր է...»։ Այդ տողերից հետո հեղինակը թելադրում է ընթերցողին բնորոշել ավելի վճռական եղանակացութուն՝ «...կրօնքը իր նպատակին չկընցավ հասնիլ...»։ Կրօնուն ավելի վնասակար եղաւ մարդկութեան համար... կղերը մարդկութեան սմինամեծ թշնամին է...»։

Անցնելով վայրենի մոգովորդներին, Հայկունին պնդում է, որ քրիստոնեութեանից հետո կանգնած վայրենիներն էլ ունին բարոյական սկզբունքներ։ Դրանց չի կարելի ոչ մեղադրել, ոչ էլ քարկոծել։ Եթե այդ վայրենիներն աստված չի տվել նույն բարոյականութունը՝ ամենևին իրավունք չպիտի ունենա անոնցմե իր չտվածի հաշիվն պահանջելու... թող չմոռանա Փափաղյանը, որ վայրենի համարվող մոգովորդներն էլ ստեղծել են ընտանիք, պետութուն, բնակչութիւն։

Անցնելով իր զբոսի անառովական նկարներին, Հայկունին նորից հարձակվում է իր փարիսեցի քննադատի վրա՝ Երիտուքյան վրա ամենևին սեպիկութուն չունենալով, իր տգիտութունը հայտնի չընելու համար (Փափաղյանը) պատկերադասաբանութեան է ելած... խեղճ և սպեռ պարուն, որքան զմեզ րան է անուսումն լինել և միանգամայն խմբադրի պաշտոն վարել... Միթե պարուն Ստեփանը ինքն անձամբ անաստվածութեան մեջ չի յնար արարչին ստեղծած և բարի տեսած մարդկային կազմութեան վերաբերյալ մեծ մասն նկարները և անոնց վրա հարկ եղած դիտութիւնը տարածելու բարի գիտավորութեամբ հրատարակված գիրք ուր զգվելի բնութիւն...»։ Իր հակառակորդին վերջնականապես ջախջախելու համար Հայկունին այս անգամ էլ կանոն տանելով ավետարանի վրա (աստուծո՞ւ ամեն ստեղծածը բարի է, թե ուր գոհութեամբ բնորոշվի)։ Նիշեցնում է նաև աստվածաշնչի որոշ էջերի մասին՝ աստվածաշնչի մեջ մենե շատ ավելի բացահայտ կերպով գրվածքներ, պատմվածքներ և օրենքներ կան մերձավորութեան նկատմամբ...»։

Այդպիսով, քայլ առ քայլ հետևելով Փափաղյանի բոլոր արգումենտներին, ժողովեցանք մերկացնում է փարիսեցի կրօնականների բոլոր սոփեստութիւնները։ Մասնաշաղկապ բնթերցողներին համոզելու համար նա հաճախ հենվում է ավետարանից քաղված ցիտատների վրա, բայց իր բնթեր-

ցողներին միշտ մղում է դեպի նորությունները— անկաշկանդ ու ամենազոր գիտություն միակ ճշգրիտ ուղիները: Ապա երիտասարդ նեոֆիտին հատուկ առույգ տոնով նորից գրավելով հարձակողական դիրքեր, արտասովոր պամֆլետի հեղինակը ներքոց է ձոնում գիտությունն սպասավորներին և հիշեցնում է, որ բնական գիտությունների հաղթանակի շնորհիվ երկրագործական, հանքարանական, մաթեմատիկական գիտությունների միջոցով մարդկությունը վերածնվել է իրապես: Այդ գիտությունները հաստատում են, որ «անհավասարությունն և անթիվելի շարիքների առաջն էլ կարելի է տեսնել»: Անհրաժեշտ է միայն «վերահասում լինել, թե ամեն մարդ միահավասար արդյունք է բնութային...»:

Ամենից ուշագրավն այն է, որ բրոշյուրի մեջ կան կարևոր ակնարկներ նաև հնօրյա ուսման մասին: Մարդասիրական գեղեցկություն ուղղված հումանիտարական պատկանելություն: Ռասայական աշխարհայեցողությունը, պամֆլետի հեղինակի կարծիքով, չաղկապված է կրոնական իդիոկրատիայի հետ: «Գրոսքը չէ», որ մեր սրտին մեջ մեր եկեղեցին բնորոշածին բան մը պակաս համարողույ ուրիշ աղագի վրա թշնամությունը կհարուցանե: միայն կրոնասիրություն չէ՞ր, որ հրեաները զատապարտաբար, մահմեդականները հեթանոս, հուսիսականները հեթանոսական, բողոքականները աղանդավոր հանդուգ մեղ... մեր կղերը չէր, որ միայն կրոնասիրության կոթնած շարունակ կքարոզե մեղ թե բացի լուսավորչական եկեղեցիին հետևողականներեն ուրիշ աղգերուն և սարքեր կրոնական դրություն հետևողներուն ծուռ հայինք՝ որ ամենևին վրայել չէ մարդկություն: միայն կրոնասիրությանը չէ՞ր, որ քրիստոնյա աշխարհ մահմեդականության թշնամի արավ, երբ նորա ձայնն առաջին անգամ լսվեցավ, և հետևաբար արդի քրիստոնեության և մահմեդականության մեջ եղած թշնամությունը քրիստոնյա կղերին դատապարտելի միայն կրոնասիր լինելու արդարանքը չէ...»:

Ես կանգ եմ առնում Հայկունու պամֆլետի միայն հիմնական մտքովների վրա, որովհետև հենց այդ մտքի միջոցով էին թելադրում Փափաղյանի նման փարիսեցիներին նետվել արմատական դեմոկրատիայի ներկայացուցիչների դեմ: «Իմ սիրտս,— գրում է պամֆլետի հեղինակը,— ամենին չպիտի ցավեր, եթե միայն (Փափաղյանը) իմ հրատարակած սկզբունքները դեմ խոսեր: Սկզբունքային վեճ մղել, սակայն, հայ սեակցիոն դործիչները չէին կարող: Փափաղյանի հետ միասին «կիրիլիա» ժողովուրդի խմբագիրն աշխատում էր ցենզորներին էլ նետել հայ սեակցիայի հակառակորդների դեմ: Այդ նպատակով հրատարակվում է նույնիսկ հատուկ բրոշյուր, որի հեղինակն անհարկում էր ինչ-որ անդամ քաղաքական կազմակերպության («Գաղտնի բնկերությունը խորհուրդը») մասին: Երբ այդ պրովոկացիան էլ չի հաջողվում, Փափաղյանի բանակը հայտարարում է, որ դեմոկրատները ապետ են, հայերեն չգիտեն, սովորներն չեն, հակասահմանադրականներ են և այլն: «...եթե ես աղագուսեր և սահմանադրական չլինեի,— պատասխանում է Հայկունին,— Փափաղյան ալ կրնա վկայել, որ մեծամեծ չահեր կրնայի ձեռք տնցնել ոմանց պես: Վեճը պիտի լինի սկզբունքային: Փափաղյանը պարտավոր է խոսել «արամաբանական և մաթեմատիկական ոճով»: Թող վերջապես նա հասկանա (իրեն դաս ընդունի), որ չի կարելի հրապարակով աղագուսաց, հակասահմանադրական, սոցիալական և քերականություն չգիտցող ածականներ նետել հակառակորդի

¹ Հայկունին—«ճերմակ կամ պարոն Ս. Փափաղյան...», էջ 18—19:

հասցեին, մի հակառակորդի, որին «հայ հասարակությունը ամենի ազգասեր և սահմանադրական» է ճանաչում և որի համար «դժվար բան չէ ևս վրոպայի իմաստասիրաց համասարի...»:

Արժանապատվությունը զգացումով և քաղաքացիական մեծագույն խիզախությամբ զրկած այդ սլամֆլիտը, իհարկե, ազդեցություն պիտի թողներ հին օրերի ընթերցողների վրա: Այսօր էլ, չնայած զրքույկի պրիմիտիվ հյուսվածքին, մեզ վրա մեծ տպավորություն են թողնում անշեջ կրակով լեղուն պոլիմիկական զրքույկի հրաշունչ տողերը: Այնուամենայնիվ հայ ժուռնալիստիկայի տաղանդավոր այդ ներկայացուցիչն էլ տարօրինակ կերպով մոռացություն է մասնակի և մինչև այսօր էլ իր արժանի տեղը չի գտել հայ գրականության պատմության նվիրված զբոսերի մեջ:

Արմենակ Հայկունին մարտնչող պուրլիցիստ էր: Նրա հայտնի վեպը՝ «Էլիզան» (Զմյուռնիա, 1861 թ.) թույլ գործ է: Ընթերցողի ուշադրությունը կարող են գրավել այդտեղ միայն միմուռային նոթերի բնույթ կրող տռանձին տիկնարկները և ապա հրապարակախոսական խոհերը քննարկական գաստրոնոմիայի մասին: Այնքան տարված էր դրագետը իր գաղափարներով, որ վեպի մեջ էլ անզաղար հանդիպում էր գալիս ազդեցություն ձուլելու: Զմյուռնիայից հեռանալուց հետո Կ.-Պոլսում նա ցած չի գնում իր գրիչը և գաղտնի է «Թուհիկ Պեղոսյան» և «Զայն» թերթերի ակտիվ աշխատակից: «Զայն» խմբագիր-հրատարակիչը ինքը Հայկունին էր: Այդ շրջանում նա կազմված էր պոլսահայ տաղանդավոր հասարակական գործիչներից մեկի, «Մանգումեթ» խմբագիր Փանոսյանի հետ: Երբ «Զայն» մեջ տպագրվում է Թեոֆանի «Հիսուսի կյանքը» գրքի հայերեն թարգմանությունը, մեծագույն իրաբանացում է առաջանում ազգային-կրոնական շրջաններում: Ինքը պատրիարքը՝ Ներսես Վարժապետյանը գալիք գայթակղությունների առաջն առնելու նպատակով հրատարակում է պոլեմիկական մի բրոշյուր (Եփեսոսոսի սուրբ եկեղեցին և անոր հակառակորդները) և խորագրում է խիզախ խմբագրին: Կրոնական ժողովը պատրիարքի նախագահությամբ դատափետում է «Զայն» հրատարակչին: Սոյանը իր կողմից հատուկ նամակ է գրում պատրիարքին և հայտնում, որ ինքն էլ միանգամայն անտեղի է համարում Թեոֆանի գրքի հայերեն թարգմանություն տպագրությունը: Վերջապես, Պոլսի բոլոր եկեղեցիներում հանդիսավոր կերպով կարդում են պատրիարքի կոնգակր և բանադրում դրագետ-հերետիկոսներին: Հանգես է գալիս նաև Ազգային քաղաքական ժողովը, և «Զայն» խմբագիրն ստիպված է լինում հատուկ դրություն տպագրել իր ժառանգի մեջ: Այդ գրությունն ինքնին տրդեն ամենի քան լավ բնորոշում է առաջավոր գրողների խիսկան կացությունը— «Քաղաքական ժողովն պահանջման համար ստորագրություն տվինք հիշյալ ժողովուն, ըստ պահանջման Ազգային քաղաքական ժողովի փութամ հայտնել թե ես իմ թերթիս 30 դ. թվով «Կոնց աղատագրությունը» վերնագրով հոդվածիս վրա բացատրություն ձև պիտի հրատարակեմ հայտնելու համար թե նույն հոդվածով իմ միտքս բնավ քրիստոնեություն կամ պսակի խորհրդա գեմ խոսքն չէր և թե շատ կցավիմ, որ հիշյալ հոդվածը իմ նպատակես տարբեր կերպով հասկացվեր է, խնդիրը լավ և անթերի քաղաքական չոր լինելու պատճառով, և արդարև կը զղջամ այս պակասությունս վրա: Թեոֆան»:

նի խմբագրմանությունը ստիպված եւ արդիւն չհրատարակելու՝ Ա. Հայկունին:¹

Կղերա-պաշտօնական լատենական միայնակ չի կոչում խիզախ ժողովուրդները: Օտյանի կողքին կանգնած էին անշուշտ բազմաթիւ ազգայնական իրերաւ սահմանադրականներ եւ: Այս անգամ էլ ոչ Ներսէս Վարժապետյանի բողոքը, ոչ Օտյանի նախակը, եկեղեցական բանադրանքը և Քաղաքական ժողովի մեծամասնութեան գերքը չեն հուսահատեցնում զԶաքն ժողովուրդի հոսանքները: Անվճար շարունակում է նա իր գործը, բայց իշխաններին շարունակ ուժեղացող հարվածներն ավելի և ավելի ծանր կացութեան էին ստեղծում: Բայց երկուսիցն ընդհանուր էին պաշտպաններին և հետևողներին շարքերն էլ: Գիտնական չէր կրակոտ, միշտ օգտորանող և միշտ բողոքող ժողովուրդը: «Զաքն» վեցերորդ համարում նա նկարում է արդեն ինքն իրեն: Ծաղրապատկեր է այդ նկարը՝ «Ներսէսը կենդանացան երկար մորուքով և երկար մազերով, երկու ստիկներ լայն կոշիկի մը մեջ: Պատկերին տակ գրված է. Արմենակ Հայկունի. ձիգմեծյանի երկու ոտքը մեկ ճիգմեկի մեջ է, սակայն չպիտի դադարի ձայնը հանելու մինչև որ կոկորդը պատռի»:²

Հայ ժողովուրդական պատմությունը մեջ գծված է գտնել քաղաքացիական անհերքելի խիզախութեան այդպիսի ուրիշ օրինակ:

Ինչն էր ստիպում այդ ազգայնագիտական ժողովուրդային քայլի հոսանքն արդիւնով քարքարոտ ու դաժան ուղիներով: Իմ վար չէր ճիգմեծյանի համար ապահովել իր վիճակը: Նա կարող էր գործ գտնել և իրեն բավ հաճանի տնտեսականներ և ամերիկացիներին մոտ: Կարող էր մեկնել Մանհետթը կամ Մեմֆիս: Ազգայնական ծանոթներ էլ ունէր: Բայց շատ ուժեղ կապերով էր կապված այդ գործիչը հայրենի հողի, ժողովրդի, կուսութեան հետ: Նա ապրում էր ժողովրդի հետ, և ժողովրդական դանդաղներն էին նրան հոսանք ներշնչում: Ընդհանուր էր գրում նա փափաղյանի պէմ ուղղված իր բողոքը: Երբ մեջ, Բայց առանց ուժեղ հոստատակաւ հեռաբանի անհնարին էր պիտի պահել բազմաթիւ իշխաններին միաձուլ արշավին: Դադարապետ և գիտնական չէր Հայկունին: Վար գնել իր սուրբ, միշտ խաղիտ սուր գրիչը՝ չէր զանկանում: Զարմանալի չէ զրանից հետո, որ նրա կյանքի վերջին օրերը շատ ծանր են լինում: Գրադեալ իշխանութեան մեջ է մտնում միևնույն 1866-ին: «Զաքն» խմբագրի կոկորդը չի պատռվում, նա չի դադարում իր ձայնը հանել, բայց ընկնում է անհաղթաբար պայքարի ճամբին, մինչև վերջ կառնած ժողովրդական պատգամներին:

2

3

Լուս էր Գոստանդյանը: Ընդմիջում լուս էր և Արմենակ Հայկունին: «Մարիկ» ժողովուրդի խմբագիր: Զինվորական ակումբ հայացքով գիտում էր կովի դաշտը, վերջինում էր տնտեսի օրերը, պատանեկութեանը և պայքարի ծանակիր-պատանեկութեան խորից ու խորից նա կարծես չին ընկերներին՝ Կոստանդյանի և կրակոտ ձիգմեծյանի պիտատակներն էր նշմարում մշտնջի մեջ, երբ պիտում էր նոր օրերի պաղեսներին: Զինվորականի «Ուղեբեր» խմբան մեջ բազմական շատ է խոսվում հայ պարբերական մամուլի և հայ պաղեսների մասին, բայց ջերմ խոսքեր չկան այդպիսի նոր գիտքերի մա-

¹ Ալլոյսիլան—«Հիտուն տարվան մեջ», Մարտ, 1901, էջ 201—205:

² Հրան Ասատուր—«Գիտատվերներ», Պոլս, էջ 241:

սին՝ «Ուղեորութեան» հիմնական տոներ պատմագրական-ոգովանական է։ Անցորդի՝ հետու վայրերից եկած ուղեորի նման է նկարագրում Ձիլինկերյանը Պոլսը, Իոսֆորը, լուռ ապարանքները։ Նկարչի նման դիտում է շրջապատը, մերթ ընդ մերթ դրի է առնում՝ ճամբորդական նոթեր իր շուշանտերի մեջ, նկարում է ծառազարդ ձովափն ու ծովափի երեսասարգներին, սուզվում է իր ապրումների մեջ՝ տարվում վաղեմի հուշերով, միշտ մտախոհ։ Այդպես էր գրում 'Իերցենը անցյալին ու ներկային նվիրած իր հայտնի մեմուարները, որոնց ֆրանսերեն թարգմանությունը լավ էր հայտնի Ձիլինկերյանին։ «Ծագիկ» մուսուլման իմքանդիլն էլ 'Իերցենի նման գեղարվեստական նկարները շարադրուսում է լիբիկական-ոգովանական հուշերի կողքին և միաժամանակ նկատում իր դիտողությունները հրատապ հասարակական պրոբլեմների առթիվ։ Կտրել այդ դիտողությունները նկարներից, թուցիկ շտրիխներով պծված դիմաւորներին, հրապարակախոսական խոհերից՝ կատարելապես անհնարին է։ «Ուղեորութեան» միասնական ամբողջություն էր, ամուր մի ձուլվածք, գեղարվեստական հրապարակախոսություն ամենատուեղ վավերապիւրը հայ գրականության մեջ։ 'Աթառնական թվականների արմատական գեոմորֆոսական հայ ինտելեկտուալ լավագույն ներկայացուցիչներից մեկի եղակի արտահայտության մեջ հնչում է անցյալ օրերի հորհուրե ու մրկիւն էպոխայի ձայնը, պծվում են վաղեմի անցյալի պատկերները և լավում են նվիրական հին երգերի մոտիֆները։

Միայն Ձիլինկերյանի դերքը կարգաւոյն հետ մեղ համար հակահայր է դառնում, թե ինչու հոստանդյանի նման աննախորդությունը և Հայկունու պես անհաշտ հրապարակագիրը մինչև վերջ չեն հեռանում սահմանադրական շարժման գիրքերից։ Ռուսանում էր պայքարի դրոշմ։ Ռուսացել էր դրոշմ։ Ռուսացած գեոքեր էին այդ դրոշի կողքին Օտյանի, փափազանի, Նար-Պեյի նման գործիչները։ Բայց դա պայքարի դրոշն էր, անցյալի ոգովանական և պանծալի պայքարի, պատանական վաղեմի անցյալի սուր դրոշն էր։ Կոստանդյանը և Հայկունին աշխատում են հրել նվիրական դրոշի մոտ կանգնած Օտյաններին, խլել դրոշը դրանց ձեռքից, նորից կանչել և բողոքել։ Երկուսն էլ պարտվում են։ Ձիլինկերյանը չի կարողանում, ավելի ճիշտ՝ չի ցանկանում նշմարել խունացած գույները։ Հին սահմանադրական դրոշակը նրա համար կարմիր է, այդ դրոշակի փայլով լուսավորված են դրոշակի կողքին կանգնած նոր գեոքերն էլ։ Օտյան, անհարապատ և թշնամի են միայն դրոշակի գեո պայքարողները՝ ծախված մամուլի դրոշիչը, պարագիտ վաճառականը, հասարակարգի իսկ դրոշակի մոտ և կողքին կանգնածներին նա ցանկանում էր իդեալականացնել և իդեալականացրած գույներով էլ նկարագրում էր։ Ահա այդ գիծն էլ առանձին փայլ էր հաղորդում «Ուղեորութեան»։ Այդ դերքը դառնում էր բոլոր սահմանադրական գործիչներին և սոցիալախոհ գրողներին համախմբող մի ազդակ։ Այնքան ուժեղ էր այդ ազդակը, որ թելադրում էր չափավոր ուղիներին կառչած լիբերալներին և երեկվա պատանական նախադիմից «սոցիալիզմ» խոհմ մարդկանց բարձհոյի, անդորր և հաշտարար մպիտով լսել եկվոր պիլիգրիմի անգամ ուսուլուցիտ խոհերը և անհանդուրժելի դիտողությունները։ Իսկ այդպիսի տողեր

՝ Գրիգոր Ձիլինկերյանի—Ուղեորութեան Կոստանդնուպոլիս, Ձմեռնիս, 1885:

և Լջեր շատ կային յիրիցմով ողեշնչված նկարագրական հասկացումների մեջ, Լջեր, որոնք այսօր հասկապես արձայանցում են մեր օրերի **ընթերցող-ների** պաշտօնական ապրումներին: Այդ այն Լջերն են, ուր Չիլինկիրյանը ներբող է ձոնում աղատություն և հումանիզմի մոնետիկներին, ակնարկում է ժողովրդական-սեռլուցիոն շարժումների մասին, խարաղանում է ժողովրդի թշնամիներին:

Յիրուցան և միևնույն ժամանակ մի ընդհանուր իդեալի շուրջ համաձուլված ակնարկների մեջ զգում է հրապարակագրի ցայաուն դեմքն **էլ** Ամրոջ զիրքը լիցուն է առույզ առդերով: Մամուլի, դրականության, զրչի մարտիկներին հատկացված Լջերը յույց են առնիս, որ «Ուղեորություն» ազանդավոր հեղինակին լավ էր հայտնի ժողովրդական շահանակությունը և հատկապես կապը հասարակական-քաղաքական կարգերի, ինչպես նաև սոցիալական ներհակ հոսանքների հետ: Առանձին իրոնիա է նշմարվում մանավանդ այն սողերի մեջ, ուր ակնարկվում է հնորյա սասիսանների մասին: Չիլինկիրյանը մարդատյացություն, բռնակալ ուժերի, շովինիստների անհաշտ թշնամին է: Գեղարվեստական խոսքի երկրպագուներից էր: Բայց այդ խոսքը պիտի միշտ իմաստալից լինի և օժանդակի ժողովրդական գանգավածների վերելքի վեհ գործին:

... «Մածձինիի հետ,—գրում էր Չիլինկիրյանը,—կարծենք սուկայն թե մի գործի սրբութունը հազար խոսքի պերճութենեն ավելի օգտակար է մարդկության»: Պոլսահալ իրականություն մեջ մեծ էր կեղծավոր սահմանադրականների և սուտ աղատասերների թիվը: Ահա փարիսեցիների այդ ոհմակն է պայրացում գրապետին: Գրքի մեջ նկատելի աղեկ են գրավում Բոսֆորի պեյրամին նվիրված նկարագրական Լջերը: Բայց բնանկարի այդ ֆոնի վրա էլ շատ որոշ են հայ միջավայրի միևնույն կողմերի խարաղանման ու դատափեռածան նվիրված սողերը: Չիլինկիրյանը գտնում էր, որ միայն անհատ քննադատություն միջոցով կարելի է հեղաշրջել **հին** իրականությունը: Կան մարդիկ,—ասում էր նա,—որոնք երևակայում են, թե «սոսմային մոլութունները ավելի հեշտ բույժ կգտնեն պահվելով, քան թե երևան ելնելով»: Հիմնովին սխալ է այդօրինակ մոտեցումը: «Թաքուն ապականություն» դեմ պայքարը պիտի լինի ավելի անողոք և վառական: Իհարկե, շատ բան գուցե և զմիտր է առել բացահայտ կերպով: «Մեր երկրի աղատասիրաց զրիչը խոսիվ գտաված է», քանի որ զրչի դեմ կռվի է ելնում գրաքննությունը:

Վերջինը, այնուամենայնիվ, չի խանգարում և չի էլ կարող խանգարել հայ գրականության միևնույն երևույթները քննադատողներին: «Մենք դատապարտելի կսեպենք—կարդում ենք «Ուղեորություն» մեջ—գրապիտաց և խմբագրաց ումանց լուսությունը կամ շողմարտություն մեր ազգին միայն վարչական և բնկերություն պակասությանը նկատմամբ»:

Աթոռական թվականներին հշատարակված այդ ժողովածուի մեջ Չիլինկիրյանը արդեն հասուն գրագետ էր—ավելի զգույշ, չափավոր և քաղաքական, բայց այդտեղ էլ, կարծես, վառարանի մոխրի մեջ առկայածում էրն անշեջ կրակի ջրլքերը:

Կարելի է կանգ առնել Չիլինկիրյանի խմբագրական գործունեության, առանձնապես նրա հայտնի «Ծաղիկ» ժողովրդի վրա: Մեր հոգվածի սահմանները զժրախառար ստիպում են այդ մասին էլ կարճ խոսել:

«Ծագիկը» հրատարակվում էր Շալուսնիայում։ Առաջին տարին ժուռնալը խմբագրում էին Զիլինկիրյանն ու Հայկունին։ Հետագայում վերջինս մնում է ժուռնալի մեջ որպես սոսկ աշխատակից։ Ժուռնալի հիմնական ոգնաչարը կազմում էին Զիլինկիրյանը, Կոստան-գյանը, Հայկունին և ապա, մի որոշ չափով, Մ. Մամուրյանը։ «Ծագիկը» առաջավոր ժուռնալներից մեկն էր և մեծագույն համարում ուներ երիտա-տարդուժյան շրջաններում։ Դա հայրենասիրական-գեմոկրատական հան-դես էր, որը պաշտպանելով տնդամ հաղգային սահմանադրության՝ սկզբ-րունքները, առանց զիջանագիտություն քննադատում էր հայրենի բոլոր մթին երևույթները։ «Ծագիկ» ժուռնալի շուրջը խմբված գործիչների աշխատանքը մեծ արձագանք էր գտնում — պոլսահայ մտավորական շրջաններում։ Պերպերյանի «Մարդիկ և իւր» գրքի մեջ (Պոլիս, 1885) նկարագրված է առաջավոր գրագետի տիպարը։ «...Ձեռ բնդունելը,— գրում էր Պերպերյանը,— որ գրագետն անտարբեր ըլլա հանրային բարուց, լուսո և խափարի կոփոյն, հաստջարիմության դարին։ Ընդհակառակն, պետք է, որ իբրեւ հաւաքապահ զինվոր մարտնչի լուսո համար՝ խափարին դեմ, իրա-վանց համար՝ բռնարարության դեմ, քաղաքակրթության համար՝ բար-րարիկ հետադիմության դեմ... գիշերասեր ջղճիկներ կան, թող լինեն արտույտներ դարչալույսն երգող և հարեւարքաթեոգ...»։

Ահա այդպիսի ակտիվ և մարտնչող գրագետներից էին Զիլինկիրյանի ժուռնալի հիմնական աշխատակիցները — և դրանց մեջ, ամենից առաջ, ինքը խմբագիրը։

Երբ ժուռնալի մեջ լույս են տեսնում Վիկտոր Հյուգոյի «Թշվառ-ներին» առանձին ֆրագմենտները, պոլսահայ եկեղեցական ժուռնալիստները խորագանելով այս տնդամ արդեն Վիկտոր Հյուգոյին, կատաղորեն նետ-վում են Զիլինկիրյանի դեմ։ Այդ պեկեցիոն հարձակմանը «Ծագիկը» վճռական հակադարձված է առլիս Զիլինկիրյանը նշում է, որ Պոլսի կրոնա-մու հայ հանդեսի տղետ աշխատակիցը չգիտէ նույնիսկ, թե մի է Վիկտոր Հյուգոն։ «Նախատեսելով մեզ,— ասում է Զիլինկիրյանը,— կրոնամու հայ օրա-դիբը կջանա կրոնական վեճի մը ասպարեղ հրավիրել մեզի...»։ «Ծագիկը» սովորություն ունի կրոնամոլությունը ապատակել ադատության ձեռքով...»։

Պոլեմիկական հողվածի սուր տոնը յուայ է առլիս, որ Զիլինկիրյանը իր աշխատակիցների հետ միասին միախալ չէր («Հայ Զոյիլ» — «Ծագիկ» 1864—87) և Զմյուսնիայում ուներ ուժեղ հասարակական հենարան։ «Ծա-գիկ», — գրում էր Վրույր Մամուրյանը, — միայն մատնութենե կվախնա... լուայ կարծեք մատնության մողան տնդամ ալ»¹...

Կանգ առնելով Վիկտոր Հյուգոյի վրա ավելի մանրամասն, Զիլինկի-րյանն ընդդոմ էր, որ Հյուգոյի գրական-գեղարվեստական երկերը մե-ծագույն հասարակական արժեք ունեն, քանի որ մերկացնում են կյանքի մթին երևույթները և խարտղանում են հասարակական չարիքները (Լջ 251—289)։ Շատ հետաքրքրական է «Ծագիկի» մեջ տպագրված հող-վածաչարը թատրոնի մասին։ Զիլինկիրյանը հողվածաչարի առաջին հատ-վածի մեջ ակնարկում է համաշխարհային թատրոնի պատմության նախ-հական էտապների մասին²։ Հիշատակելով Լուպե դե Վելյայի, Կորնելի, Վոլ-

¹ Ծագիկ, Զմյուսնիա, 1864, Լջ 317։

² Ծագիկ, 1862

տերի, ճեքսպիրի նշանակութեան մասին, նա ընդգծում է, որ հայ իրական-
 նութեան մեջ թատրոնը եղել է և պիտի լինի ուսումնասիրան-կութեամբ
 Բազմաթիւ խմբադրական առաջնորդողների մեջ էլ Զիլինկիրյանը մնում է
 միշտ հանդուգն, համարտախոս և մարտնչող հրապարակագիրը։ Իդուր չէր
 նա հովանավորում և պաշտպանում ըմբոստ գրադետներին և իգուր չէին
 կոստանդյանի ու Հայկունու նման գրադետները պաշտպանում «մագիկ»
 մուսուլման ուղղութեանը։ Թշնամիները, սակայն, ուժեղ էին։ Իրանը միայն
 սուրբ էին որոնում իրենց անհաշտ հակառակորդին խեղդելու և սպանելու
 համար։ Զիլինկիրյանն ավելի զգույշ էր, քան կոստանդյանը և Հայկու-
 նին։ Կովիւով հեղեցիականների դէմ, կրոնի մասին նա գրում էր ավելի
 զգուշաւոր տոնով։ Իսլայ պայքարը սրվում էր, և անհնարին էր մինչև վերջ
 մնալ լոկ զգույշ խմբագրի դերում։ Տեմպերամենտ էլ ուներ Զիլինկիրյանը
 և մերթ ընդ մերթ շատ սուր լեզվով էր քարկոծում իր հակառակորդնե-
 րին։ Իվերջն զրանք էլ միասնական շարքերով նետվում են ստեղծ խմբա-
 գրի դէմ։ Մարտական վարժարանի մեջ Զիլինկիրյանն ուսուցիչ էր, եւ
 ստիպում է լինում հրամարական տալ և հետանալ զպրօցից, Դիւ հետո
 ծանրագուշակ կացութիւն է ստեղծվում մուսուլման համար։ Մեղ հայտնի չէ
 Զիլինկիրյանի դէմ հարուցված դատի մանրամասնութեանը։ Ինչպես
 երևում է, պահպանողականների գրոհը լինում է շատ ուժեղ։ 1867-ին լի-
 վիդացիայի է ևնթարկվում «մագիկ» մուսուլման Իրանից հետո էլ պայքարը
 շարունակվելով դառնում է նույնիսկ ավելի սուր։ Տեղեյան եղբայրների
 հրատարակչութեան հնարավորութեան է տալիս ադատախոհ արեմտա-
 կաններին նոր թափով շարունակել դադափարական պայքարը։ Հին եգիպտա-
 կան քուրմերի դէմ։

«Մագիկ» 1867-ին լիվիդացիայի է ևնթարկվում, իսկ 1867-ից
 մինչև 1878 պայքարն այնքան ուժեղանում է, որ միևնույն Տեղեյան եղ-
 բայրները հնարավոր են համարում 1878-ին լույս աշխարհ հանել կոստան-
 դյանի «Մեթոսին վրա» գիրքը։ Տասնմեկ տարի առաջ «Մագիկ» մեջ կոս-
 տանդյանը շատ սուր և անուղիք տոնով խարապանելով հեղեցու մթին
 ներկայացուցիչներին, անուամենայնիվ խուսափում էր քննական որևէ
 խոսք նետել կրոնի ու քրիստոնեական մասին։ Իսկ այժմ, 1878-ին, նա
 կոչ էր անում քննեցողներին կտրականապես հրաժարվել կրոնական սրիէ
 ուղեղից և ավելի վճռական կերպով փարել դիտութեան միակ հաղթիս
 ուղիներին։ Պոլսից գրում էին, որ այդ երևույթը ողջունվում է նաև
 մայրաքաղաքում։ Տեմիրճիպաշյանն անդամ, այն Տեմիրճիպաշյանը, որ
 շատ ամուր լռել էր Օտյանի փեշերը ոգևորվում է, Կարելի է ևնթարկել,
 և այդ ևնթարկութեանը անհիմն չէ, որ 1867-ից մինչև 1878 արևմտական-
 անի քանակը ոչ թե թուլացրել, այլ ուժեղացրել էր իր արշավի տեմպերը։
 Զիլինկիրյանը ցած չի դնում իր գրիչը, եւ թարգմանում է ֆրան-
 սիական կլասիկներին՝ Վիկտոր Հյուգոյի «Թշնամիները», Լամարտինի
 «Բաֆայեր», Ալֆրեդ Մյուսսեի, Ժորժ Զանգի և մի շարք ուրիշ հայտնի
 գրադետների երկերը։ Իր ձեռնարկած թարգմանութեան առթիւ նա հա-
 տուէկ նամակ է գրում Վիկտոր Հյուգոյին և ապա Հյուգոյից ստացված
 նամակն էլ տպագրվում է «Թշնամիներ» հայերեն հրատարակութեան մեջ։
 Դա զորավոր ապստակ էր՝ Հյուգոյին անվանարկող հայ սեակցիոն գործի-
 անի դէմ ուղղված շատ ուժգին մի հարված։ Իր թարգմանական աշխա-

տանքներով Չիլինկիրյանը, ինչպես նշել են թյուրքահայ բանասերները, նպաստել է աշխարհարարի մշակման գործին։ Թարգմանություն համար ընտրված հատորներն արժարժույթ էին հրատապ թիմաներ և այս կամ այն կերպով նորից հարվածում էին հին կյանքի քրմապեաներին։ Մի չարք հայ գործիչներ վկայում են, որ Հյուսիսի վեպերը հակառակն ազդեցություն են թողել հայ ընթերցողների վրա։ «Կարելի չէ ուրանալ—գրում է անգամ չափավոր լիբերալ Հրանտ Ասատուրը,—թե իմ սերունդիս հրիտասարդներն շատեր Չիլինկիրյանի թարգմանած «Թշվառներու» ընթերցում են մեծապես ազդված են, և Պյենվընյու հպիսկոպոսին ու Ժան Վալմանին, Դանթենին ու Գոգեթին, Ժավեոնին ու Կալոոշին նկարագրիները շատերուն հոգիին մեջ խորունկ գրոշմ ձգած են»¹։

Թարգմանական գործունեությունը Չիլինկիրյանի համար հասարակական-գրական գործունեություն էր — միշտ առգործված մի հիմնական դադարարով։ Այդ գործունեության համար անհրաժեշտ էին աջակիցներ և խթաններ։ Երբ Չիլինկիրյանը գրում էր իր «Ուղեորություն», նա էլ, թերեւ, զրույց էր, որ հեշտ չի լինի նոր լեզու գանել նոր հանդեսների համար։ Դերքենի նման տխրություն էր նա ակնարկում վաղեմի օրերի մասին և Դերքենից առնված տողերն էլ նշում էր իր բացառիկ գիտողությունների մեջ։ Համենայն դեպս մի փաստ հայտնի է. շատ եռանդուն, անսպառ սովորություն էր և էրուզիցիայի տեր, տակավին կուռ Չիլինկիրյանը ցած է գնում դրիչը և ստիպված է լինում քաշվել գրական կյանքից։ Գուցե այդ էլ փրկում է գրականությունից։ Ժիգմենյանը մինչև վերջ կանչում, բողոքում ու ընկնում է պայքարի ճամբին։ Չիլինկիրյանը լուռ հեռանում է պայքարի կրկեսից։ Մեծագույն սովորություն էր և եռանդ էր անհրաժեշտ։ Այդպիսի եռանդ ունեն Չիլինկիրյանը։ Միայն եռանդը բավական չէր։ Անհրաժեշտ էր մշակել նոր խոսելակ, նոր տակտ, նոր ոճ։ Հարկավոր էր համակերպվել, իսկ այդ արդեն շատ դժվար, գրեթե անհնարին էր գործի և մրրկի ներկայացուցչի համար։ Եթե լինեք ունեւոր մի մեքենատ, գուցե Չիլինկիրյանն էլ իր «Ուղեորություն» նման ուրիշ հատորներ հրատարակեր։ Այդպիսի մեքենատ չկար և երեսունհինգ տարիները տաղանդավոր գրագետի համար անցնում են անպտուղ և ապարդյուն։ Փրկվում է գրագետի կյանքը, բայց ցավալի հարված է ստանում հայ գրականությունը, կորցնելով իր ամենատաղանդավոր ներկայացուցիչներից մեկին։

Ես կանգ չեմ առնում Մսերյանի և Նուսարյանի գործունեությունը վրա։ Կարելի է գտնել ուրիշ անուններ ևս։ Պոլսումն էլ կային աղատախոհ մտածողներ և լուսավորիչներ։ Իմ նպատակն էր հիշեցնել Միք. Նալբանդյանի արևմտահայ հետևողների մասին, որոնց թե՛ երկերը և թե՛ կյանքը շատ քիչ են ուսումնասիրվել։ Կարելի է վճռական կերպով պնդել, որ մոռացված այդ գործիչներից ոչ մեկը արժանավոր չափով չի դնահատվել հայ կուլտուրայի պատմությանը նվիրված հին հետազոտությունների մեջ։ Պատահական չէ այդ «անտիկություններ», ինչպես պատահական չէ այն էլ, որ միայն մեղ մոտ, մեծ Սովետական Միությունը սահմաններում, Լենինի և Ստալինի պատմական էպոխայում, հայ մոլորիկի մոռացված հերոսները դառնում են կենդանի գեմքեր, մեր օրերի հրատապ պրոբլեմներին արձագանգող գործիչներ։

¹ Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, էջ 148.

Арт. Каринин

Западно-армянские просветители 60—70-ых г. г.

(РЕЗЮМЕ)

В очерке, посвященном характеристике незаслуженно забытых армянских просветителей-демократов, автор отмечает, что передовая западная наука имела выдающихся пропагандистов-популяризаторов в Смирне — в лице Костандяна, Чизмеджяна, Чилинкиряна. Смирна была после Стамбула вторым культурным очагом турецких армян. Демократическое движение стамбульских просветителей здесь имело сильную опору. Спаянные теснейшими узами с передовыми представителями столичной интеллигенции, упомянутые деятели вели активную борьбу против азиатчины, клерикализма и шовинизма. Идея дружбы народов была их знаменем. Передовая западно-европейская наука для них была твердой опорой. Книжки, выпущенные Костандяном („О методе“), Чизмеджяном (политические брошюры, памфлеты), Чилинкиряном (Путешествие в Стамбул, Мемуары) показывают, что в борьбе против армянской реакции смирнским демократам-просветителям приходилось нередко останавливаться на лже-научных аргументах стародавних расистов. Налбандяна — друга Герцена и Огарева — хорошо знают они.

Все трое считались зловерными вольнодумцами. Первая книга Костандяна („О методе“) решением национальных властей была конфискована. По требованию последних автор был вынужден уничтожить второй том своей работы (рукопись). Чизмеджян был затравлен. По требованию Стамбульского патриархата он был вынужден напечатать покаянное письмо, смягчить тон своих выступлений, прервать печатание перевода работы Эрнеста Ренана. Имя нечестивого пропагандиста материализма было предано проклятию. Ряды просветителей были уже разбиты. Чилинкиряну оставалось примириться с условиями — приспособиться к сложившейся новой обстановке. Приспособиться он, однако, не мог и поэтому предпочел отказаться от литературной работы. Книга его — знаменательный документ. Чилинкирян цитирует Герцена (с франц. перевода). Вся композиция мемуаров сложена под влиянием мемуаров Герцена. Стиль Чилинкиряна — четкий и образный. В книге немало красочных страниц. Острым резцом художника очерчены портреты стамбульских деятелей. Вся книга — апология науки и передовой культуры.

Смирнские демократы-просветители были убеждены, что всемогущая наука может и должна исцелить все раны общества. В книге Костандяна много цитат из работ выдающихся европейских ученых. Он ссылается на Бокля, Дренера, Тайлора, Маркса и др. Как в его книге, так и в работах его единомышленников немало

противоречий. Несмотря на это, бодрый тон выступлений и стойкая борьба против реакции подкупают читателей и сейчас. Смирские демократы-просветители были знаменосцами национально-освободительного движения 60-ых гг. и сыграли прогрессивную роль в истории армянской общественной мысли.

Դրականություն

- Մուղիկյան—«Հայկական Նոր ժառանգություններն և հանրագիտարան հայ կյանքի», 1907.
 Առաքյալ—«Հայ գրականության պատմություն», II.
 Ալվազյան—«Շար հայ կենսագրություն», I—III, 4. Պոլիս.
 Առաքյալ—«Դիմապատկերներ», Կ. Պոլիս.
 Արքայան—«Թյուրքապաշտը հին վանականությունն և վանականներ» (1760—1800) Պոլիս, 1908.
 Պարպուրյան—«Մարդիկ և իրք», Պոլիս.
 Դոսյան—«Հայր Ջյուսեփ», Վիեննա, 1891, հատ. 1—2.
 Պ. Արմենյան—«Հուշատեղի հայկական Ջյուսեփյան», Փարիզ, 1936.
 ✓ Ալվազյան—«Պատմություն հայ կենսագրության», Գաշիք, 1937, հատ. 2.—«Երգերի զարգացում».
 Բեռլի—«Ամենուրեք արհեստ», 1921.
 Զարպուրյան—«Հիշատակարան», Պոլիս, 1912, հատ. II—III.
 Ճիսմենյան—Հայկական—«Էյիզա», Ջյուսեփյան, 1861.
 Կույնը—«Զարեան ծագիկներ», 1863.
 Կույնը—«Ընթերցանական Ստ. Փափագյանը և իր ժամանակը», 1863.
 Ալվազյան—«Հիսուս տարվան մեջ» (1851—1901), ասյ. Վասիս, 1901.
 Զիլիկիկյան—«Արհեստներն և Կ. Պոլիս», 1887.
 Ք. Առաքյալ—«Հասարակագիտական», 1—15 հատ.
 Կույնը—«Ինքնակյան զրան», Ջյուսեփյան, 1878.
 Երազիկ—1861 Արհեստ, մամ. 1878, 1898, 1902.
 Ինտերնո Պարբեր. հանդես իմք. Իսկրյան, Ջյուսեփյան, 1880—1883.